ԳԻՐՔԻՆՕՍՈՒԹԻՒՆ, ՍՈՂՏԵՆՔԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍԻՐՈՅ ԵՒ ԱՐԿԱԾԻ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՏՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[1]

«Տարիներ անցան: Այն պանդուխտ տղաքը հիմա ցրուած են չորս ափերով: Ոմանք բանուոր են ու գերի, ուրիշներ կ՚ուսանին՝ հաւապալով աւելի լաւ օրերու, ոմանք կ՚երգեն ուրիշներու հաճոյքին համար, ու այն պզտիկ մուրացիկ մանչը, ով գիտէ, ո՞ւր է հիմա՝ կա՛մ հողի անյայտ բլուրի մը տակ եւ կա՛մ, ով գիտէ, գուցէ ողջ է ու հասակ նետած ու կը ժպտի Մեծ Մասիսին: Ա՜հ, իր անուշ ու սիրելի անունը մոռցած եմ հիմա: Այնքա՜ն ապերախտ է մեր յիշողութիւնը, բայց իր աչքերը կը շողան միշտ, ա՜հ, ինչպէ՞ս, գիտնա՛ք, յիշատակներուս մութ պասպարտին վրայ»:

Վազգէն Շուշանեան
«Սիրոյ եւ արկածի տղաքը»

Ինչ-որ մէկը Շուշանեանին կոչեց «Դաշնակցութեան երեսուած տղան», միւսը նենգափոխեց նրա քաղաքական դաւանանքը, անուանեց դաշնակցութեանը վէրք հասցրած «մարտկոցականներու զսպանակ», երրորդը «առեղծուած» համարեց Շուշանեանին, չորրորդը՝ «ըմբոստ՝ մինչեւ իր մահը», հինգերորդի համար նա իր սերնդի առաջապահ մարտիկն էր, որ «քսանը հազիւ անցած»՝ հրապարակներում աղմկում ու հայհոյում էր բոլոր նրանց, ովքեր «մէյտան չեն բացեր նորերուն», վեցերորդի կարծիքով Չափահաս որբերու միութեան այդ «ապստամբ» անդամը խիստ ծայրայեղ էր, յախուռն, բողոքող եւ անհանդարտ, բայց եւ՝ արդարամիտ, եօթներորդը նրան համարեց ճակատագրի դառն հարուածների ստիպողութեամբ ժամանակից շուտ հասունացած տղայ, որ ոչ միայն մտքով ու փորձով, այլեւ հոգով ու նեարդերով էր ապրում իր ժողովրդի գլխին եկող արհաւիրքը: Շատերի համար Շուշանեանը նոյնանում է իր իսկ կրքոտ գրչով գրուած «Բաց նամակ»ին՝ «Ո՞ւր է Բակունց, ո՞ւր է Չապէլ Եսայեան... Ցոյց տանք, առ որ անկ է, որ ո՛ղջ ենք, արթո՛ւն ենք դեռ»... Իսկ եթէ գերծ

1 **Վ. Շուշանեան,** Ընտրանի, Երեւան, 2010:

մնանք այս ամէնից եւ հաղորդակից լինենք նրա գրչի կախարդանքին, կը տեսնենք «սիրոյ եւ արկածի» պատանուն, որի սրտի մէջ խօսում էր «դարերու մութին մէջէն հազագող աղուոր եղջերափող մը» եւ ազդարարում էր գոյութիւնը ռազմի դաշտում օտար ու բիրտ ուժի դէմ մարտնչող «աւազակ տղերք»ի, որոնց կեանքի ու գործի, գաղափարի հեւտեւորդը դարձաւ «Անապատի սերունդ»ի այս փոքրիկ «տղան», ում հոգին ընդարձակ էր ատելութեամբ, նայուածքը խիստ էր ու ամուր, եւ «ժողովուրդին տառապանքին տակ, այդ զանգուածեղ, այդ հսկայական, այդ զարհուրելի բեռան տակ ուսերը դեռ հաստատուն էին»...

Շուշանեանի ողջ ստեղծագործութիւնը նուէր է բոլոր «ցնցոտիապատ, կիսամերկ, տառապանքէն հիւանդ, հեզ ու հայու անուշ աչքերով, պզտիկ մուրացիկ մանչերուն», բոլոր նրանց, ում կեանքի բնականոն ընթացքը եղեռնը խաթարեց: Խաթարեց, սակայն չկարողացաւ սպանել այս սերնդի հետ ծնուած «հայու ոգին»: Եղեռնն ընդամէնը կարողացաւ արցունքի եւ անամոթ ցաւի որոշակի քանակութիւն խառնել այն ստեղծագործութիւններին, որոնք գրուեցին գրչով ազգային պատմութեան դաժան հնոցով անցած այս փաղանգաւոր սերնդի, որի երակներով հոսող արեան բաղադրութիւնը չփոխուեց բռնութեան օրերի գալարումներում:

Ամէն սերունդ ի՛ր տեսածով, ի՛ր պատկերի համաձայն է կերտում օրերի պատմութիւնը, ի՛ր կենսագրութեան, ի՛ր հոգեւոր կազմութեան թելերով է հիւսում ժողովրդի կեանքի առասպելը: Իսկ մեր ժողովրդի պատմական կեցութիւնը զարմանալիօրէն յիշեցնում է կրկնուող դէպքերի անվերջանալի շարան: Հայոց կենսագրութիւնները նման են իրար. աւերուած մանկութեան ու պատանեկութեան խարխուլ պատերի վրայ բարձրացած երիտասարդութիւն, հոգեբանական խոր ճգնաժամերով ուղեկցուող կեանքի ուղի, տառապանքով ու մղձաւանջային տեսիլներով լեցուն յիշողութիւն, ցեղի ու արեան՝ անվերջ հեւտապնդող ձայներ, չաւարտուող քառսի մէջ վերակենդանացող դէմքեր ու դէպքեր: Օշականը, Համաստեղը, Մնձուրին, Շուշանեանը, Սիւրմելեանը, Հայկազը, շատ-շատերը ստեղծեցին իրենց գործերը՝ խորապէս ապրելով դարի ցնցումները, անցնելով արեան ու կոտորածի ճանապարհներով, տեսնելով սարսափելի սպիտակ ջարդը՝նահանջը, իրենց հոգու պատերին սեղմելով տառապալից կարօտը, իրենց մէջ ուժ գտնելով համամարդկային բարձրութեան հասնելու՝ անհունօրէն հայ մարդ մնալով: Նրանց շնորհիւ գրականութիւն բերուեց եղեռնից ու աշխարհացրիւ տարագրութիւնից յետոյ նոր կացութեան մէջ յայտնուած հերոսը, որի մարմնաւոր եւ հոգեկան տառապանքներին աւելացել է ուծացման, նահանջի, ձուլման տագնապը:

Յ. Կարապետեանը հրաշք է համարում Համաշխարհային առաջին պատերազմից եւ Մեծ եղեռնից յետոյ վերապրողների՝գրական նոր փնտռտուք կատարելը: Յիրաւի, հայ գրողներն ուժ գտան սեփական ցաւի պատկերումով, իրենց անունից խօսելով՝ներկայացնել աշխարհի բովի մէջ թրծուած հային: Հայ տարագիրների սերունդները, օտարութեան մէջ կատարելով հայրենեաց ոգու թռիչքները, շարունակեցին ծուէն առ ծուէն ստեղծել իրենց հայրենիքը, գեղարուեստականացնել այն:

Ֆրանսահայ գրական ակութում 20-րդ դարասկզբին գրական բեղուն գործունէութիւն սկսեց Վազգէն Շուշանեանը՝ անցնելով գոյապահպանութեան դառն փորձութիւնների միջով: «Ողբերու» սերնդի կարկառուն ներկայացուցիչը իր ժամանակի ծնունդն է, ժամանակ, որ բարդ էր ու հակասական, դժվարութիւններով ու ելեւէջումներով լի: Գրականագէտ Հ.

Թ-ամրազեանը իրաւացիօրէն գրում է.«Գրական մեծութիւնները չեն բարձրանում անապատում, նրանք հասակ են նետում արգաւանդ հողի վրայ, հարազատ շրջանում, նրանք ծնունդ են առնում բանաստեղծական շիկացած, թանձր մթնոլորտից, եւ իրենք էլ ազդում են գրական մթնոլորտի ու մտածողութեան վրայ» («Սովետական գրականութիւն»,1974, թիւ 4, էջ 126): Շուշանեանի անպաճոյճ ու շքեղ լեզուն, յանդուգն ոճը, գեղեցիկ յոյզերը խառնուեցին ցեղասպան վէրքի ցաւն ապրած արեւմտահայ գրական մթնոլորտին. ազգային վէրքը շարունակ ցաւ էր պատճառում, ցաւի վրայ նոր կեանքի հէքեաթն էին հիւսում Օշականը, Մնձուրին, Սիրմելեանը, Համաստեղը...

Ռ. Զարդարեանը գրում է, որ գրականութեան մէջ Արուեստն իր տեղն ունի, եւ Գաղափարը՝ իր տեղը. անշուշտ հիանալի բան է, որ երկուսը հնարաւոր լինի համատեղել: Արուեստի եւ գաղափարի համատեղման զարդարեանական բանաձեւումը բնորոշ է Շուշանեանի ստեղծագործութեանը՝ լոյսի շողերի նման իր ստեղծագործութեան խորքերը ծայրէ ի ծայր թափանցող ազգային գաղափար եւ անկրկնելի գեղագիտութիւն: Նրա գործերում ոչ միայն յստակօրէն երեւում է հայ կեանքն իր խորութեամբ, այլեւ միահիւսում են նրա ու իր հերոսների ճակատագրերը: Հեղինակն ու իր հերոսները կենսափիլիսոփայութեան փոխանակում են կատարում, նրանք մտածողութեան, զգացմունքների նոյն բաղադրութիւնն ունեն եւ դժուարութիւնները յաղթահարելու ձգտումներ դրսեւորող անհատներ են: Տարիների ընթացքում Շուշանեանի հոգու խառնարանում պիտի համաձուլուեն Եւրոպական Թուրքիոյ հայաշատ Ռոդոսթօ քաղաքում ծնուած Օնիկ Շուշանեանը, Պոլսի ուսանողը, Ջինադադարից յետոյ Հայրենիքում յայտնուած «անօթի որբը», որը տակաւին ապրում է ազգային մղձաւանջը, ֆրանսական գործարաններից մէկի հասարակ բանուորը, որն ունի հաւատարիմ բարեկամ՝ հոգու կորով, Փարիզի վարժարանների ուսուցիչ-պաշտօնեան. այս ամէնից նրա մէջ պիտի յառնի-բարձրանայ զգայուն, մտածող, դիտող անհատը, որը իրովի է վերապրում համաշխարհի յեղաբեկումները:

Ընդունուած է Շուշանեանին համարել «կարօտի գրականութեան» ներկայացուցիչներից մէկը, նրա ստեղծագործութիւնը դնել Համաստեղի, Մնձուրու, Հայկազի ստեղծագործութեան կողքին: Անժխտելի է, նա, թերեւս, յաճախ է գունազարդում անցեալը, երբեմն տողերի արանքում «խոստովանում», որ պատմածը «կէս սուտ է, կէս իրաւ», ապաւինում է կարօտին ու յուշերին. կարօտը յոյս էր ու սպասում: Եւ քանի որ վերյուշի գրական հնարանքը ծանօթ է նաեւ մինչեղեռնեան շրջանից, թերեւս պէտք է Շուշանեանին տեսնենք արեւմտահայ դասական գրողների շարունակողի դերում, սակայն նրա պարագային ծանօթ իրականութեան գեղարուեստական նուաճումը կատարում է իսկապէս նոր գրականութեամբ, նո՛ր եւ բոլորովին տարբե՛ր իր նախորդների ու ժամանակակիցների ստեղծած գրականութիւնից: Շուշանեանը անցեալի եւ նորի հաշտեցման գեղագէտներից է մեր գրականութեան մէջ:

«Բագին»ի խմբագրակազմի տաղանդաւոր անդամ Եդ. Պօյաճեանը հանրայայտ «Դէմքեր» շարքում «անգիջում հայ, սաստկօրէն, մակընթացօրէն հայ» է անուանում «Պոսթընի Համաստեղին, Նիւ Եօրքի Էւերթըն Սթրիթի Հայկազին, Փարիզի Շուշանեանին, Նարդունիին, Նշան Պէշիկթաշլեանին, Սարաֆեանին, Հրաչ Զարդարեանին ու Որբունիին... Բոլորն ալ 1915ի պատանիներ՝ եղան սաստիկ հայ, կրակի պէս կիզիչ: Ու խռովիչ ու խենթ...»: Ապա շարունակելով խօսքը՝ գրում է, որ զօրութեան երկու գլխաւոր բեւեռներ կան մարդկային

կեանքում՝ կռուի զօրութիւն եւ խաղաղութեան զօրութիւն. արտասահմանի մեր արդի գրականութեան մէջ կենսունակութեան նշան է կռուի բեւեռը, որի վրայ կանգնած է Վազգէն Շուշանեանը («Բագին», Ամսագիր գրականութեան եւ արուեստի, Բէյրութ, 1962, թիւ 7):

Ջինադադարից յետոյ որբացած Օննիկ Շուշանեանը յայտնուել էր Հայրենիքում: Դառն ժամանակներ էին, ազգային մղձաւանջը անվերջ հետապնդում էր նրան: Ճակատագրի հալածանքն էր շարունակւում. փշոտ եղաւ նաեւ Շուշանեանի գրականութեան ճանապարհը դէպի Հայրենիք: Իրաւացի է գրականագէտ Սուրէն Դանիէլեանը, երբ գրում է. «Առնուազն տարօրինակ է, որ մինչեւ հիմա մենք չունենք Վազգէն Շուշանեանի գրական ժառանգութեան ամբողջական դասակարգումը, հատորների մէջ ստեղծագործութիւնների խնամուած, մշակումի ենթարկուած ուրուագիծը»: Շուշանեանի «գրաքաղաքական» ճակատագրի պատմութեանն առնչուող բազում հարցականներ է տեսնում գրականագէտը՝ խորհրդային գրաքննութեան մերժողական վերաբերմունքի դրսեւորումը նկատելով քսանամեայ անկախութիւն ունեցող Հայաստանի անտարբերութեան մէջ: Շուշանեանի ստեղծագործութեան մուտքը «մերօրեայ Հայաստան հին պարտքերի հատուցման գին ունի». սա է գրականագէտի համոզումը, եւ նրա ջանքերով 2010ին Վազգէն Շուշանեանն ընտիր երկերի ստուար ու ուշագրաւ հատորով «վերադարձաւ» Հայրենիք: Գիրքը, որ հրատարակուել է «Յովսէփ եւ Գարոլին Նալպանտեան» մատենաշարի խորհրդի որոշմամբ, կազմել եւ խմբագրել է «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրէն, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Սուրէն Դանիէլեանը: Հատորում տեղ են գտել «Առաջին սէրը», «Մահուան առագաստը» («Երիտասարդ արուեստագիտուհիի մը օրագիրը»), «Սիրոյ եւ արկածի տղաքը», «Ճերմակ Վարսենիկ», «Դառն հացը» երկերը: Ներկայ ընտրանիում տեղ գտած գործերը Հայաստանում հրատարակւում են առաջին անգամ, միայն «Ճերմակ Վարսենիկ»ն է ծանօթ Հայաստանի ընթերցողին. այն լոյս է տեսել երեք տասնամեակ առաջ:

Շուշանեան արուեստագէտի յիշատակին եւ նրա նրբագեղ արձակին ձօնուած գիտական խօսք է Սփիւռքի գրականութեան ճանաչուած մասնագէտ Ս. Դանիէլեանի հեղինակած առաջաբանը՝ «Վազգէն Շուշանեանի գրական ճակատագրի առջեւ» խորագրով: «Նրա մահից շուրջ եօթանասուն տարի անց մենք վերադառնում ենք գրական արժէքների իմաստաւորման: Այն, ինչ պատմում է, իսկապէս իր մասին է. անհանգիստ ու փոթորկոտ, քնարական ու ըմբոստ ես-ն է «ծածկում» նրա ստեղծագործութիւնների ներքին շերտերի բոլոր անկիւնները»,- գրում է գրականագէտը եւ «յորդորում» այս «Ընտրանի»ով ճանաչել՝ որն է «այդ ես-ի՝ միջուկի պէս մեզնից փախչող ու երբեմն նաեւ մեզ ընդառաջ եկող դիմագծի կորը»:

Գիրքը նախատեսուած է ընթերցողների լայն շրջանակի համար. կարդանք ֆրանսահայ նշանաւոր գրողի գործերը, որպէսզի նա «միայնակ» չզգայ Հայրենիքում, իսկ մեզ տրուած է բացառիկ առիթ՝ ըմբռշխնելու Շուշանեանի գեղեցիկ գրականութեան թովչանքը:

ՄԱՐՕ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
«Էօրնեքեան» հանրակրթական դպրոց